ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե-4164

«05» հունիսի 2025թ.

ԱՐՏԱԿ ԱԲԳԱՐՅԱՆ ԱՁ-ԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Պռոշյան., 29բն.)

Ա/Ձ ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
(Հասցե՝ Երևան, Ջրվեժ, Մայակ , շ.33, բն. 6)

ՎԱՀԱԳՆ ՄԵԼԻՔ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՁ-ԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 8 2-րդ հարկ, 217,218,219 սենյակ)

«ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ՎԱՐՏԱՆՈՎԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Ռ. Լեմկինի 14)

«ՊԼԱՏՔԱՐՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ե. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Երևանյան փ., 3 նրբ., տ. 19)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/09» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Արտակ Աբգարյան ԱՁ

Արտակ Աբգարյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված N 1-ում, սխալ է լրացված ռուսերեն լեզվով կազմակերպաիրավական տեսակը:

Ա/Ձ Հասմիկ Սիմոնյան

Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի կողմից eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ 4-րդ, 17-րդ, 21-րդ և 22-րդ չափաբաժինների մասով:

ՎԱՀԱԳՆ ՄԵԼԻՔ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՁ

ա) 9-րդ չափաբաժնի մասով Վահագն Մելիք-Մարտիրոսյան ԱՁ-ի կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում Ընթացակարգ հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ բացակայում է ապրանքի՝ սնուցման մարտկոցի չափերին վերաբերող տեղեկատվությունը:

բ) 19-րդ չափաբաժնի մասով Վահագն Մելիք-Մարտիրոսյան ԱՁ-ի կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «TOP COOL PS-05 600W հզորությունը՝ 550 W». հզորությանը վերաբերող պարամետրն ունի հստակեցման կարիք:

«ԱՄԱԶՈՆ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերություն

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված N 1-ում, լրացված չէ պատվիրատուի անվանումը:

«ՊԼԱՏՔԱՐՏ» ՍՊ ընկերություն

ա) Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1-ը, հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

բ) Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի հունիսի 06-ը ներառյալ Համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/09» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Մ.Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788